№ 45 ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼԻ 22 **1895** ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼԻ 22 № 45

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կիրակի, ապրիլի 23-ին, ժամը 12½-ին Խօջիվանքի գերեզմանատանը հոգեհանդիստ է կատարվելու

ՐԱՖՖԻԻ

գերեզմանի վրա, նրա մահվան եօթներորդ տարեդարձի առիթով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Ամուսնացած այրիներ». Հայոց հարցը և եւրոպական մամուլը. Բոլգարները և հայերը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Արարատը» երեխաների ձեռքում. Նամակ Ալէքսանդրապօլից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ազատամիտ կուսակցութեան պարզաբանութիւնը. Ժողով Կիպրոս կղզու վրա. Նամակ Թիւրքիայից. Նամակ Թիւրքիայից.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Գրողի օրագրից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Անգլիայից.

„ԱՄՈՒՍՆԱՑԱԾ ԱՅՐԻՆԵՐ"

—

Այլ ևս ոչ որի համար գաղտնիք չէ, և ոչ էլ կասկածելի, որ պանդխտութեան ահագին հոսանքը, որ տեղի ունի մեր գիւղերից դէպի քաղաքները, միանգամայն կանգնեցնում է ազգաբնակութեան կանոնաւոր աճումը։

Այդ տխուր երևոյթը աւելի շօշափելի, աւելի ակնյայտնի կերպով նկատելի է Թիւրքաց Հայաստանում, ուր տնտեսական հանգամանքների վրա բարդված քաղաքական ծանր պայմանները ոչ միայն աւելի են սաստկացնում պանդխտութեան հոսանքը, այլ և թոյլ չեն տալիս, որ հաղարաւոր պանդուխտներ, դէթ մի քանի տարի պանդխտութեան մէջ մնալուց յետոյ, ազատօրէն, իրանց ցանկացած ժամանակը, վերադառնան իրանց ծննդավայրը, իրանց ընտանիքի գիրկը...

Հայաստանի գիւղերում սովորական երեւոյթ է, որ նոր ամուսնացած տղամարդը, որը մի որդի ունի, կամ նոյն իսկ իր առաջին որդուն էլ չէ տեսել, ձեռքն է առնում պանդխտութեան ցուպը և գնում կ. Պոլիս, Ամերիկա, Բալկան, Թիֆլիս, Բաթում... ուր նա մնում է ոչ թէ մի տարի, երեք տարի, այլ շատ անգամ եօթ տարի, տասն տարի, տասնհինգ տարի...

Ինչու չէ վերադառնում պանդուխտը իր տունը, ի՞նչու նա այդքան երկար ժամանակ մնում է օտարութեան մէջ,—այդ թողնենք։ Վերցնենք միայն այն, որ այդքան երկար տարիներ, ծանր, մաշող տարիներ ջահիլ կինը, արտասուքը աչքերին, ամուսնու կարօտով այրվելով, սպասում է իր մարդուն, „աչքերը ջուր են կտրում",—բայց ամուսինը չէ գալիս ու չէ գալիս...

Եւ այդպիսի ամուսնացած, բայց ամուսնու կենդանութեան ժամանակ այրիացած կանանց հայոց գիւղական ազգաբնակութեան մէջ կարելի է հաշուել հազարներով.—նրանք կազմում են մի ամբողջ դասակարգ, մի ահագին բազմութիւն։

Հայոց եկեղեցու ամուսնական կանոններով, այդպիսի կանայք, նոյն իսկ իրանց ջահիլ հասակում, իրաւունք չեն ստանում մարդու գնալ, նորից ամուսնութեան մէջ մտնել, եթէ մինչև իսկ նրանց ամուսիններ տասն, տասնհինգ տարի բացակայ են, չեն վերադառնում իրանց տունը, չեն հոգում իրանց կանանց մասին, և նոյն իսկ աւելորդ են համարում օտարութիւնից հաղորդել, թէ արդեօք ուզում են երբ և իցէ վերադառնալ, թէ ոչ...

Շատ անգամ պանդխտած ամուսինը օտարութեան մէջ մեռնում է, շատ անգամ հեռու որ և է քաղաքում նա նորից պըսակվում է, վճռում է այլ ևս չը վերադառնալ իր օրինաւոր կնոջ մօտ.—բայց գիւղի մէջ խեղճ կինը, գիշեր ցերեկ հալու մաշ լինելով, պահպանելով իր ամուսնական մաքրութիւնը, սպասում է և սպասում... Նա իրաւունք չունի ձայն անգամ հանելու նոր ամուսնութեան մասին,—որովհետև ամուսնական կանոնադրութիւնը թոյլ չէ տալիս, արգելում է...

Եւ ահա դրա հետևանքը այն է, որ հազարաւոր ջահիլ, առողջ կանայք, թէև ամուսնացած են, բայց de facto այրի են, չեն ծնում, սերունդ չեն բազմացնում, և առանց որ և է յանցանքի մատնվում են այն անտանելի, նիւթապէս և բարոյապէս տաժանելի կեանքին, որին ենթարկված են մեր գիւղական ազգաբնակութեան մէջ „ամուսնացած այրիները։"

Դա մի մեծ չարիք է։

ՀԱՑՈՑ ՀԱՐՑԸ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

I

Մուչից հաղորդում են անգլիական լրագիրներին, որ քանիչ յանձնաժողովը արդէն հարցուփորձի ենթարկեց բազմաթիւ հայ վկաներին։

Այդ վկաներից մի քանիսը հաստատեցին այն պատմութիւնը, թէ շատ հայերին կոտորեցին, ապա նրանց մարմինները գցեցին մեծ փոսի մէջ, որը առաջուց փորված էր դրա համար։ Հայոց ցուցմունքները, սակայն, մի քանի կէտերում հակասում էին միմեանց և որովհետև թիւրքերը պնդում էին այն բանի վրա, թէ մի այդպիսի դէպք տեղի չէ ունեցել, այդ պատճառով յանձնաժողովի անդամների համար շատ դժուար է ճշմարտութիւնը երևան հանել։

Հայերը յոյս ունեն, որ երբ յանձնաժողովի անդամները կայցելեն Սասուն, նրանց կաջողվի գտնել նախկին կոտորածների հետքերը և, գլխաւորապէս, այն փոսը, ուր թաղված են թիւրքաց գազանութիւնների զոհերը։

Մի կողմ թողած վկաների ցուցմունքներին հաւատալ կամ չը հաւատալը, պետութիւնները Հայաստանում բէֆորմներ մտցնելու իրանց պահանջները հիմնում են գլխաւորապէս այն անբաւարար պայմանների վրա, որոնք գոյութիւն ունեն հայկական նահանգներում, և այդ նահանգների վատ վարչութեան վրա, որը մշտական վտանգների աղբիւր է օսմանեան կայսրութեան համար։

II

«The Galignani Messenger» լրագրին հաղորդում են ապրիլի 17-ից, որ Փոքր-Ասիայից Պոլիս եկած նամակները նկարագրում են հայերի և մահմետականների յարաբերութիւնները շատ լարված դրութեամբ. մահմետականները հաղիւ իրանց զըսպում են և, ուր կարող են, գործ են դնում ճնշումներ։

Այդ պատճառով բրիտանական, ֆրանսիական և ռուսաց դեսպանները ամեն օր միմեանց հետ խորհրդակցում են. մշակելու բարենորոգութիւնների մի այնպիսի ծրագիր, որ Բարձր Դուռը մտցնի անմիջապէս առանց յետաձգութեան։

Իւրաքանչիւր դեսպանատուն նշանակել է իր կողմից մի մի ներկայացուցիչ, որոնք միասին գումարված՝ քննում են այդ խնդիրը, և երէկ պէտք է, որ նրանք ունեցած լինեն իրանց վերջին նիստը։

III

Լոնդոնի «Times» լրագիրը իր ապրիլի 13-ի համարում տպագրել է մի նոր հեռագիր, որ ստացել է իր թղթակցից։

Հեռագիրը նկարագրում է Սասունի բանտարկեալների անտանելի վիճակը։ Պատմում է ինչպէս Մուրադին տանջում են եղել անգութ կերպով, ստիպելով, որ նա ցուցումներ տայ, թէ սասունցիները ունեցել են մեծ պատերազմական պատրաստութիւններ, թէ օտար մի պետութիւն, այսինքն Անգլիան, նրանց օգնում է եղել, թէ քիմիական թանաքի միջոցով գրուածները նրան յայտնի են և այլն։

Քսան և եօթ սասունցի բանտարկված իշխաններից կենդանի են այժմ միայն տասն և եօթը, մնացածները մեռել են բանտի կեանքից, վայրենի ծեծից, քաղցածութիւնից և տանջանքներից։

Կառավարութիւնը այժմ ստիպում է նրանց, որ նրանք թուղթ տան թէ մեռածները զոհ են գնացել խօլերային։

IV

Ֆրանսիական «L'Algérie» լրագիրը հաղորդում է, որ անգլիական դեսպանի վերջին ունկնդրութեան ժամանակ սուլթանի մօտ, անգլիական դիպլոմատը տեղեկացրեց սուլթանին, թէ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը պատրաստել են բէֆորմների մի ծրագիր Հայաստանի համար։

Սուլթանը յայտնեց այդ երեք պետութիւններին, թէ ինքն չէ ընդունում նրանց մշակած ծրագիրը և որ իրան է միայն վերապահում Հայաստանում մտցնվելի բէֆորմների ծրագրի մշակութիւնը։

ԲՈԼԳԱՐՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

(«Gaulois»)

—

«Մենք տարօրինակ նորութիւններ ենք ստանում Սոֆիայից և կ. Պոլսից։ Յայտնի է ամենքին, թէ ինչ ագիտացիա է տիրում այս րոպէին Բոլգարիայում Մակեդոնիայի վերաբերմամբ։ Միտինգներ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԱՆԳԼԻԱՑԻՑ

—

Լոնդոն, ապրիլի 5/17

ՍԱՍՈՒՆՑԻՔ և ԳԼԱԴՍՏՈՆ

Զատիկն ի Հաարտըն

«Տէր Աստված, ով կը հաւատար թա մենք էմմալ օրի երժան տի ըլլանք»։

Այո, երբ անցեալ տարի Զատկի կիրակին, սասունցիք, աշխարհէն անջատեալ, իրենց գեղջկական եկեղեցիներն դիմելով՝ ջերմեռանդութեամբ զԱստուած կը փառաւորէին, ով կը հաւատար թէ հետևեալ Զատկին, իրենցմէ մի քանի հոգի, Հաարտընի գեղեցիկ եկեղեցիին մէջ, հայոց սիրելի Կլատսթօնի հետ, զԱստուած փառաւորելու բարեբախտութիւնն պիտի ունենան։

Մեր այս տարվայ Զատկի տօնն մեզ միշտ անմոռանալի պիտի մնայ։ Պատմեմ ձեզ։

Ընթերցողը անշուշտ կը յիշեն, թէ ինչպէս, ապէ մի քանի ամիս առաջ, Կլատսթօնի ծնընդեան 85-րդ տարեդարձի առթիւ, Գաղղիոյ և Անգղիոյ հայերն Հաարտընի քահանային (որ Կլատսթօնի մեծ որդին է) նուիրեցին մի ականակուռ ոսկեայ սկիհ, որոյ առթիւ «մեծ ծերունին» խօսեցաւ մի ճառ, որ ամբողջ աշխարհ դղրդացուց։

Պ. Աթքին, Անկլօ-Արմենիէն ընկերութեան քարտուղարն, զայն ետ բերած էր Լոնդոն, վրան փորագրել տալու համար ձօնման խօսքերն, անդղիերէն, և նաև դեղեցիկ հայերէն գլխատառերով ՃԺԶ Սաղմոսի հետևեալ խօսքերն.—«Զբաժակ փրկութեան ընկալայց և զանուն Տեառն կարդացից»։

Սուրբ բաժակն պատրաստ ըլլալով, պ. Աթքին այս աւագ շաբաթ օրն զայն Հաարտընի պիտի տանէր, հետն ունենալով պատ. Ֆրէտ. Տ. Կրիյն—մի հայասէր ամերիկացի երիտասարդ—որ Տաճկաստան ծնած ու մեծցած ըլլալով, և 4 տարի ալ Վան մնացած ըլլալով, մեր ազգի վիճակը մօտէն կը ճանաչէ։ Պատ. Կրիյն, որ հայերէն շատ լաւ գիտէ, հայկական խնդրոյ վրա և Սանոյ ջարդին նկատմամբ մի գիրք հրատարակած է անգլիերէն և հիմա, իւր պաշտօնն թողելով, եկած է Անգղիա, որպէս զի նպաստէ հայոց գործին։

Մեզ հրաւիրեցին իրենց ընկերանալ և մենք սիրով ընդունեցինք—այսինքն սասունցիներ Վարդան, Պետրոս, իւր կինն Անուշ, և ես։

Կէսօրին մեկնեցանք Լոնտոնէն և 4-ին հասանք Զէսթըր, մի սիրուն քաղաք, Լիվըրփուլէն ոչ շատ հեռուն։ Մեր գալուստն լրագրաց միջոցաւ արդէն իմացուած ըլլալով, կայարանը մեծ բազմութիւն մը ժողոված էր, որ քաղաքավար հետաքրքրութեամբ մեզ կը դիտէր։

Հաարտընի քաղաքապետի օգնականն, որ յատուկ կայարան եկած էր մեզ դիմաւորելու համար, իւր գլխաւորին կողմանէ մեզի բարի գալուստ մաղթելով, մեզ կառքով ուղեկից եղաւ մինչև Հաարտըն։ Տեսարաններն հիանալի էին, օդը սքանչելի։ Ամեն կողմ խումբ խումբ բազմութիւն մեզ համակրանօք կը բարեէր—մանաւանդ Հաարտընի նամակատան առջև, ուր իջևանեցանք։

Հետևեալ առաւօտ, Զատկի կիրակին, ժամը 10-ին եկեղեցի գացինք—ամենքս սև հագած։ Քահանան՝ վերապատուելի Սթիվըն Կլատսթօն, իւր օգնական քահանային հետ, դուռը գալով մեզ Զատիկն շնորհաւորեց և սիրալիր ընդունելութեամբ մեզ առաջնորդեց իւր մեծանուն հօր ընտանեկան նստարանն։ Եկեղեցին, որ Զատկի տօնին առթիւ դալարեղէնով և ծաղիկներով շքեղապէս զարդարուած էր, լեցուած էր մի խուռն բազմութեամբ։

Մի քանի րոպէ վերջն, խումբ խումբ ներս եկան Կլատսթօնեան բազմաճիւղ գերդաստանի անդամներն—քաջ երիտասարդներ, ազնիւ տիկիններ և սիրուն երեխաներ, կարմիր այտերով, ոսկի մազերով և փայլուն աչերով—ամենն ալ ուրախ, գոհ և երջանիկ։ Առաջին ներս եկողն էր մի քաղցրաղէմ, ծերունազարդ տիկին—դա միսիս Կլատսթօնն էր։ Վերջինն էր մի միջահասակ ծերունի որ, հակառակ իւր բազմաչխատ 85-ամեայ հասակին, թեթևընթաց քայլերով եկաւ ծնրադրեց իւր կնոջ քով և իւր գորովագութ երեսն դէպի երկինք վերցունելով, սկսաւ ջերմեռանդութեամբ աղօթել։ Դա աշխարհահռչակ Ուիլեամ Իուըրդ Կլատսթօնն էր։

Նստարանին մեզի տուած ըլլալով, իրենք բազմեցան ճիշդ մեր դիմացն—չորս հինգ քայլ հեռու։ Կլատսթօն ունի մի զարմանալի կերպով համակրելի, մեղմ, հայրական դէմք և նոյն ատենն ալ, անբացատրելի հեռահայեաց աչեր, որ կարծես ամեն բան կը թափանցեն։ Զօրաւոր և ուղղակազմ ուսերուն վրա թեթևութեամբ կը կրէ իւր փառաւոր գլուխն։ Երեսն բոլորովին ածիլուած է, միայն թուշին տակ և ականջներուն քով քիչ մը մօրուք ունի, որ, մազերուն նման, բոլո-

են տեղի ունենում ամեն տաս, տասն հինգ օրը մի անգամ Սոֆիայում և բոլգարական կամ ռումելիական ուրիշ քաղաքներում, բոլգարական հայրենասէրները բոցավառված ճառեր են արտասանում ի նպաստ «մակեդոնացի եղբայրակիցների», ուղերձներ և խնդրագիրներ են ուղարկում պրինց Ֆէրդինանդի կառավարութեանը և մինչև անգամ Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններին, խնդրելով իրագործել այդ դաշնագրով խոստացված ռէֆորմները Մակեդոնիայի համար և բողոքելով այն տանջանքների դէմ, որ թիւրք իշխանութիւնների շնորհով կրում է Մակեդոնիայի թշուառ ազգաբնակութիւնը։»

«Բոլգարական մամուլը ամբողջ ոյժով պաշտպանում է «մակեդոնական» այդ շարժումը, և Սոֆիայի, Ֆիլիպպօպոլի, Տիրնօվոի և այլ տեղերի մի քանի լրագիրները մի քանի ժամանակից այնպիսի լեզու են բանեցնում Բ. Դրան հասցէին, որ Նրանց մուտքը Թիւրքիա արգելվեց։

«Սակայն այդ բոլոր շարժումը արուեստական է երևում։

«Կատարելապէս ճիշդ աղբիւրներից մեր ստացած տեղեկութիւնների հիման վրա կասենք, որ այդ գործը «աստառ» ունի։ Երևում է, որ այսպէս անժամանակ և առանց շարժառիթների սկսված մակեդոնական հարցի գլխաւոր պատճառը արտասահմանեան ինտրիգներն են։

«Կ. Պոլսում համոզվել են, որ հայոց շարժումը սերտ կապ ունի «մակեդոնական այդ շարժման» հետ, և որ եւրոպական պետութիւնը—հեշտ է գուշակել, թէ ո՞րը—յարուցանելով մէկ հարցը, նոյն այդ պետութիւնը գրգռում է բոլգարական մարրօնէտներին մակեդոնական հարցի մէջ։

«Այդ պետութիւնը, յիրաւի, մի դրական շահ ունի՝ միանգամից յարուցանելով երկու հարցերն ևս, այն է ստիպել Բ. Դրան ենթարկվել իրան։ Բայց ո՞րն է այդ շահը և որո՞նք են այն հարցերը, որոնցով նա ցանկանում է ձեռք բերել Թիւրքիայից զիջումներ՝ սպառնալով Եւրոպայի քննութեան ենթարկել միաժամանակ երկու հարցերն ևս, այն է հայկական և մակեդոնական հարցերը։

«Մի բան միայն ոչ օրի համար գաղտնիք չէ, որ այդ պետութիւնն է, որ անուղղակի կերպով յարուցանում է այդ աղմուկը մի քանի ամիս շարունակ։»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ԱՐԱՐԱՏԸ» ԵՐԵՒԱՆԵՐԻ ՁԵՌՔՈՒՄ

Մենք չենք պահանջում, որ «Արարատը» լաւ խմբագրվի, ընթերցանութեան պիտանի նիւթեր տայ իր «պարտաւորված» բաժանորդներին, որովհետև մեր կողմից վերին աստիճանի մեծ միամտութիւն կը լիներ մի այդպիսի բան պահանջել ճեմարանի ուսուցիչներ Քարամեանից, Յովհաննիսեանից և Բերբերեանից, որոնց ոյժից և շնորհից միանգամայն վեր է այդ գործը։

Եւ առհասարակ քանի որ «Արարատի» խմբագրութիւնը և գրական մասը պէտք է կախված լինի ճեմարանի խմբի փոփոխութիւնից, քանի որ «Արարատ» խմբագրողները պէտք է լինեն по назначенію, որոնց հրամայվում է խմբագրել «Արարատը» և նրանք էլ գրում և խմբագրում են, առանց զրելու շնորք ունենալու, ինչպէս, օրինակ, այժմ է,—ասում ենք, քանի որ խմբագրողները «նշանակվում են», անկարելի է սպասել, որ Էջմիածնի օրգանը բաւարարութիւն տայ իր ընթերցողներին, կանգնած լինի յայտնի բարձրութեան վրա։

Կրկնում ենք, մենք չենք պահանջում, որ «Արարատը» լաւ խմբագրվի, մենք միայն մի բան ենք պահանջում,—մենք պահանջում ենք, որ «Արարատը», հայոց հոգևոր-վարչական կենտրոնի այդ օրգանը, Էջմիածնի պաշտօնական բերանը խաղալիք չը դառնայ մի քանի երեխաների ձեռքում, չը դառնայ կուսակցական, բայց, ներեցէք, ափսոս է այդ բառը, չը դառնայ թայֆայական օրգան, որի մէջ մի քանի թեթևամիտ պարոններ աշխատում են «լուանալ իրանց կեղտոտ լուացքը»։

Եթէ զանազան Քարամեաններ, Բերբերեաններ, Յովհաննիսեաններ, Կոստանեաններ սովորել են Թիֆլիսի փողոցային թերթերում ամեն տեսակ ինսինուացիաներ անել, զբաղվել նենգամիտ, եղուիտական յօդուածներ գրելով, այդ դեռ չէ նշանակում, թէ նրանք այդ նոյնը կարող են անել հայոց մայր աթոռի պաշտօնական օրգանում, որը հրատարակվում է ամենայն հայոց Կաթողիկոսի անունից և նրա հրամանով։

Մենք մի կողմ կը թողնենք այն ստոր ակնարկութիւնները, երեխայական խղճանքը, որ թոյլ են տալիս իրանց «Արարատի» խմբագրողները, և որոնք իսկոյն մեր աչքին ընկան, երբ մենք սկսեցինք թերթել ամսագրի այս տարվայ համարները. մենք չենք խօսի և այն ոճի մասին, որով կարելի է գրել միմիայն փողոցային թերթերում.—մենք միայն մատնանիշ կանենք մի վերին աստիճանի աններելի փաստի վրա։

Մեռնում է Էջմիածնի միաբանութեան անդամ՝ Լևոն վարդապետ Խօջայեան։ Վերջին աշակերտն անգամ լաւ գիտէ, որ Էջմիածնի պաշտօնական օրգանը պէտք է հաղորդի այդ դէպքի մասին, առանց քննելու թէ «Արարատի» խմբագրողները համակրում են նրան թէ ոչ։

Սակայն, կարող էք երևակայել, «Արարատը» դրված ամենաստոր միտումներից, իրան թոյլ տուեց անտես առնել այդ փաստը, և այսպիսով Լևոն վարդապետի մահվան մասին, որ տեղի ունեցաւ փետրվարի 24-ին, չէ արձանագրված՝ «Արարատի» ոչ մարտի, և ոչ էլ ապրիլի համարում։ Խօջայեանից յետոյ մեռաւ Կիւրեղ եպիսկոպոսը.—այդ մասին «Արարատը» տպագրել է գովասանական յօդուածներ, կենսագրութիւն, իսկ նոյն միաբանութեան մի ուրիշ անդամի մահվան մասին, նա իրաւունք է համարում նոյն իսկ չը յիշել։

Թոյլ տուէք հարցնել. եթէ վաղը մի որ և է կառավարչական պաշտօնեայ մեռնի կամ որ և է պաշտօն ստանայ, պաշտօնական օրգան «Кавказъ» լրագիրը կարող է չը տպագրել այդ մասին, այն հիման վրա, որ այդ լրագրի խմբագրին, կամ որ և է աշխատակցին ատելի է մեռնող կամ պաշտօն ստացող անձը։ Գիտէք թէ այդպիսի մի քայլի համար ինչ պատասխանատուութեան կենթարկեն այն պաշտօնական օրգանի խմբագրին, որ իրան թոյլ կը տար մի այդպիսի յանդգնութիւն...

Բայց «Արարատի» երեխայ խմբագրողները իրանց թոյլ են տալիս այդպիսի խաղեր Էջմիածնի պաշտօնական օրգանի հետ, և յոյս ունեն թէ անպատիժ կը մնան։

*

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼԻՑ

—

Ապրիլի 7-ին

Մեր անցեալ թղթակցութեան մէջ, որ տպագրվեց «Մշակի» 22-րդ համարում, խօսելով մեր գաւառի հողաղուրկ գիւղացիների մասին, ասեցինք, որ այս գարնան տեղի ունեցան հողաբաժանումներ։

Հողաբաժանութեան պատճառով այնպիսի մեծ կռիւներ տեղի ունեցան, որ գործը հասաւ գաւառական և նահանգական ատեանները։ Գիւղի աղքատիկ մասը ցանկանում է, որ հողատիրութիւնը մնայ հին սիստեմի մէջ, այսինքն հարուստը իր ձեռքն ունենայ համ շատ, համ էլ լաւ յատկութեան հող, իսկ աղքատը մնայ զուրկ թէ շատ հողից և թէ լաւ հողից, կամ աւելի ճիշդն ասած՝ հարուստը մնայ ընդմիշտ հարուստ, իսկ աղքատը՝ աղքատ։

Բայց մեծամասնութիւնը այլ կերպ է հասկանում.—համաձայն օրէնքի, գիւղացիները կամենում են, որ հողը, թէ լաւը և թէ վատը, բաժանեն անձի վրա և ոչ գերդաստանի, ծխի վրա, որովհետև կան տներ, որ չորս հոգուց են բաղկանում, կան տներ, որ 15—20 հոգուց են բաղկանում։

Ահա այդ առիթով սարսափելի կռիւներ տեղի ունեցան մեր գաւառում, ինչպէս, օրինակ, Թապաղօլակ, Զիթահան, Փոքր-Ղարաքլիսա, Արդիկ, Հօռօմ և ուրիշ գիւղերում։ Կառավարութիւնը յարգելով գիւղացիների մեծամասնութեան խնդիրը, որոշեց և հրամայեց, որ հողը բաժանեն երեք տեսակի՝ լաւ, միջակ և վատ, և այդ երեք տեսակից հաւասար բաժանեն անձի վրա։

Այդպէս էլ եղաւ, թէև Թապաղօլակ գիւղում հոգևորականութիւնը տարդի կերպով ուզում էր իր ծխական գիւղացիներին հարստահարել և հողը ընդ միշտ իր ձեռը պահել։ Բայց չաջողվեց. մինչև իսկ գիւղի քահանաներից մէկին փոխեցին աւելի հեռու գիւղ, սաստիկ հրամայելով, որ քահանան չը պէտք է խառնվի ժողովրդի հողային խնդիրների մէջ։

Եղանակը խոնաւ է և անձրևային. ցանքը դեռ չեն աւարտել. յոյս կայ, որ այս տարի հունձը լաւ լինի։

Մեր քաղաքում առևտուրը քնած դրութեան մէջ է. Զատկի տոներին քաղաքը քիչ կենդանութիւն ստացաւ, բայց յետոյ տիրեց սովորական տաղտկալի կեանքը։ Ամենքը սպասում են նոր չինվելիք երկաթուղուն։ Երկաթուղու պատճառով շատերը յոյս ունեն, որ գործեր կը բացվեն և մեր քաղաքը դէպի լաւը կը դիմէ։

Շիրակեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Մոսկվա, ապրիլի 8-ին

Խնդրում ենք՝ Մոսկվայի հայ ուսանողութեան կողմից Լևոն վարդապետ Խօջայեանի պսակի համար ուղարկած 25 րուբլին յատկացնել հանգուցեալի չքաւոր աշակերտների օգտին։

Վ. Տէր-Կարապետեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ապրիլի 20-ին, հինգշաբթի, Թագաւոր Կայսր Ալէքսանդր Ալէքսանդրովիչի մահվան կիսամեակը լրանալու առիթով, Վրաստանի էկզարխի եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց։ Հոգեհանգստին ներկայ էին՝ կառավարչապետի օգնական կոմս Տատիշչէվ, Թիֆլիսի նահանգապետ իշխան Շերվաշիձէ, բազմաթիւ գեներալներ և զանազան հիմնարկութիւնների ներկայացուցիչներ։

—

Ինչպէս երևում է Կ. Պոլսի մեր թղթակցի վերջին նամակից, շուտով տեղի պէտք է ունենայ Կիլիկիայի հայոց կաթողիկոսի ընտրութիւնը։ Մենք չը գիտենք, թէ Կիլիկիայի հայերը ում աչքի առաջ ունեն այդ պաշտօնի համար։ Սակայն մենք կարծում ենք, որ եթէ Կիլիկիայի կաթողիկոսական պաշտօնի համար ընտրեն Գրիգորիս եպիսկոպոս Ալէքսիձեանին, որ մինչև այժմ յայտնի է իբրև համակրելի հայեացքների տէր և հաստատակամ մի մարդ, դրանով Սիսի աթոռը մեծ շահ կունենայ։ Ալէքսիձեան եպիսկոպոսը թիւրքահայ եպիսկոպոսների մէջ այժմ աչքի ընկնող և մի և նոյն ժամանակ շատ համակրելի անձնաւորութիւն է։

—

Ինչպէս երևում է, Լօնդօնի «Daily Telegraph» լրագրի Հայաստանում գտնվող թղթակցի հեռագրական թղթակցութիւնները շուտով կը դադարեն, որովհետև, ինչպէս լսում ենք հաստատ աղբիւրից, այդ անվեհեր թղթակիցը շուտով մեկնելու է Հայաստանից։

—

Առաջիկայ երկուշաբթի, ապրիլի 24-ին, տեղի կունենայ նոր քաղաքագլխի ընտրութիւնը։ Իշխան Ն. Արղուտինսկի-Դոլգօրուկի համաձայնութիւն տուեց քուէարկվել քաղաքագլխի պաշտօնի համար, իսկ մնացած կանդիդատները բոլորը հրաժարվեցին։ Իշխանը, երևի, համարեա միաձայն կընտրվի, որովհետև դումայի ձայնաւորների բոլոր կուսակցութիւնները ցանկանում են տեսնել նրան քաղաքագլխի պաշտօնում։

—

Մեզ հաղորդում են, որ այս տարի Ներսիսեան դպրոցի վերջին, այն է վեցերորդ դասատան աշակերտների հարցաքննութիւնները սկսվելու են մայիսի 1-ից։

—

ռովին ալևոր են և արծաթ թելերու նման կը փայլին։

Լսողութիւնն քիչ մը տկարացած ըլլալուն, երբ քահանան սաղմոս կամ աւետարան կը կարդար, անմիջապէս ձեռքը եղած մեծ ս. Գրքին մէջ, տեղը գտնելով, ուշադրութեամբ կը հետևէր։

Աղօթքներու ատենն ալ միշտ ծնրադրելով ժողովուրդին հետ, ջերմեռանդութեամբ և բարձրաձայն քահանային ըսածներն կը կրկնէր։ Զարմանալի կերպով ուշադրաւ և դիւթիչ ձայն մըն է Կլատթօնի ձայնն։ Հեռաւոր որոտման կը նմանի և նոյն ատենն ալ շատ մեղմ ու հաճելի։

Քարոզի ատենն գնաց և, քահանային դիմաց, իրեն յատկացեալ աթոռին վրա նստելով, ձեռքը ականջին դրաւ և իւր որդւոյն սրտաբուղխ խօսքերուն ուշադրութեամբ մտիկ ըրաւ։ Քարոզի բընաբանն էր սաղմոսերգուին վերոյիշեալ խօսքերն, որ հայատառ փորագրեալ էին նուիրեալ բաժակին վրա։

Գրեթէ բոլորովին հայոց վրա խօսեցաւ։ Ի վերջոյ, խօսքն մասնաւորելով ներկայ եղող երեք սաստնցոց վրա, ըսաւ.

«Մեր հետ այսօր կաղօթեն երեք կենդանի վկայներ իրաց այս սարսափելի վիճակին—երեք կենդանի զոհեր մահմետական բարբարոսութեանց—որ եկած են ազատութեան և ապահովութեան այս օրհնեալ երկիրն, պատմելու մեզ իրենց վիշտերն ու ցաւերն, վստահ լինելով թէ վեհանձն և իրաւասէր անգլիացիք պիտի չի մերժեն, այս ահաւոր ճգնաժամի մէջ, մարդասիրութեան ձեռք կարկառել դժբախտ հայ ազգին։ Զրկեալ իրենց եկեղեցիներու և քահանաներու հոգևոր մխիթարանքէն, եկած են այս ս. Զատկի օրն զԱստուած փառաբանել, որ իր ողորմածութեամբն ազատած էր զոնէ իրենց կեանքն, եթէ ոչ իրենց ընտանիքն ու ստացուածքն, զոր արդէն թուրք մարդասպանն ու քուրդ աւազակն անհետացուցած էին։ Իրենց համար անհասկանալի է, որ մենք այստեղ մեր քրիստոնէութեամբ կը վայելենք միշտ խաղաղութեան օրհնութիւններն և ապահովութեան երջանկութիւնն, մինչդեռ իրենք, այդ նոյն քրիստոնէութեան համար, կը հալածուին ու կը չարչարուին, կը կեղեքուին ու կը սպաննուին։ Եւ յիրաւի, երբ որ լսէք կամ կարդաք, ինչպէս որ ես կարդացի երէկ իրիկուն, իրենց անձնական փորձանքներու պատմութիւնն, զոր կը պատմեն իրենց զեղջկական պարզութեամբն ու նախնական ճշմարտութեամբն,—այն ահռելի կոտորածն, այն գաղանային վայրագութիւններն, այն աներևակայելի բարբարոսութիւններն և այն սարսափելի անզթութիւններն, որոնց ենթարկուեցան իրենք և իրենց հայրենակիցք—և այն ալ (ամաչելով պէտք է ընդունենք)՝ բարձրագոյն հրամանաւ,—երբ որ լսէք այս զարհուրելի, սակայն անուրանալի իրողութիւնները, կըսեմ, վստահ եմ, որ դուք ալ, ինձ նման, մի քրիստոնէական զայրոյթով յուզեալ, պիտի որոշէք չի դադարել քարոզելէ և բողոքելէ մինչև որ վերջ տրուի այսպիսի հնադարեան անիրաւութեանց և սասուցոց անմեղ արիւնովն վաստակեալ իրաւունքներն վերջապէս շնորհուին հայոց հին ազգին»։

Քարոզն խիստ սրտաթափ էր և տպաւորութիւնն խիստ սրտաշարժ։ Կէլիկիւղանցի և տալվորիկցի ընկերներս, որք եպիսկոպոսական ժամասացութենէն, երդերու քաղցրութենէն և աղօթքներու ջերմեռանդութենէն արդէն յուզեալ էին, թէև քահանային անկեղծ խօսքերն չէին հասկանար, սակայն տեսնելով իրենց վրա յառեալ արտասուալից աչերն և յուզեալ դէմքերն, ալ սիրտներնին բոլորովին եաւ։

Ինչու համար աչերէս արցունք կը հոսէր։ Չեմ գիտեր։ Սակայն ես մենակ չէի, ամենքս ալ զգածեալ էինք։ Քահանայ Կլատթօնի ձայնն կը դողար խօսած ատենն և մինչև իսկ իր քեռայր, պատուելի Հ. Տրու, երբ հաղորդութեան աղօթքն կընէր, ձայնն բոլորովին կտրելով, ստիպուեցաւ աղօթքն ընդմիջելով մի վայրկեան լուռ մնալ։ Այո, անգլիացիք անտարակոյս հայերը կը սիրեն և կը փափաքին օգնել։ Տար երկինք որ ուրիշ եւրոպական ազգեր ալ նոյնպէս զգային։

Երբ եկեղեցական պաշտամունքն վերջացաւ, լռութեամբ ժողովուրդն մեկնեցաւ։ Իսկ ծերունի պարոն և տիկին Կլատթօն, մենք և մի քանի ուրիշներ, խորանին առջև ծնրադրելով, հաղորդութեան ս. խորհուրդին մասնակցեցանք։

Այդ անմոռանալի Զատկի կիրակին, առաջին անգամն ըլլալով, գործածուեցաւ հայոց կողմանէ Հաարտընի եկեղեցւոյն նուիրեալ ոսկեայ և ականակուռ բաժակն։

Եկեղեցիէն վերջին մեկնողներն մեր հայկական խումբն էր, բայց երբ դուրս եկանք, ահա մի խուռն բազմութիւն որ թէ բակն և թէ փողոցն խռնեալ մեզ կը սպասէր և քաղաքավարութեամբ ճամբայ տալով, համակրանօք մեզ կը բարևէր։

«Տէր Աստուած, ով կը հաւատնար թա մենք էմմալ օրի երժան տի ըլլանք»։

Պոյաճեան

Մենք ստացանք Թէոդոսիայից, հանդուցեալ Ղազարոս Բերբերեանի կտակի պատճէնը, որով նա կտակել է զանազան հասարակական հիմնարկութիւններին բաւական խոշոր գումարներ: Մենք կաշխատենք կտակի գլխաւոր կէտերի հետ ծանօթացնել հասարակութեանը:

—

«Вѣстникъ Европы» ամսագրի ապրիլի համարում տպագրված է Պատկանեանի «Մայր Արաքսի արտասուքը» բանաստեղծութեան և երիտասարդ բանաստեղծ Լեռնցի երկու ոտանաւորների թարգմանութիւնը: Թարգմանողը երիտասարդ հայագէտ Իւրի Վեսելովսկին է: «Մայր Արաքսի» ռուսերէն թարգմանութիւնը հրաշալի է:

—

Ապրիլի 20-ին, հինգշաբթի, քաղաքային դումայի դահլիճում կայացաւ «Մսուր» ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը, բժշկապետ Պանտիւխովի նախագահութեամբ: Այդ ընկերութեան մէջ, նրա հիմնվելու օրից, այսինքն դեկտեմբերի 24-ից մինչև մարտի 24-ը ընդունվել են 1071 մանուկներ (731 աղջիկ և 340 տղայ): Ապաստանը բացված է 20 մանուկների համար, և իւրաքանչիւր երեխայի պահելու վարձ առնվում է օրական 3 կոպէկ: Ընկերութիւնը հիմնվելու օրից, մուտք ունեցել է 5664 ր. 47 կոպէկ, իսկ ծախս՝ 4121 ր. 98 կոպէկ: Ընկերութեան նախագահը առաջարկեց խնդրել Մեծ Իշխանուհի Կէսէնիա Ալէքսանդրովնային Իր հովանաւորութեան տակ առնել ընկերութիւնը, և նոյնպէս պատուաւոր անդամներ ընտրել հայր Եօան Կրոնշտադսկուն և կառավարչապետի ամուսնուն՝ Ե. Բ. Շերեմետեւային, որին ընկերութիւնը միաձայն հաւանութիւն տուեց: Ապա տեղի ունեցաւ ընկերութեան վարչութեան անդամների ընտրութիւն:

—

Օդէսայում հրատարակվող «Одесскія Новости» լրագիրը համարեա իւրաքանչիւր համարում տպում է, ի հարկէ, առիթից օգուտ քաղելով, պատկերներ գիտութեան, քաղաքական և հասարակական գործունէութեան մէջ աչքի ընկնող անձերի: Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի հիւպատոս Միրզա Բիղա խանը նշանակվեց Պետերբուրգի դեսպան, իսկ Պետերբուրգի պարսից դեսպան Միրզա Մահմուդ խանը Կ. Պոլսի դեսպան: Այժմ, վերոյիշեալ լրագիրը, իր վերջին համարներից մէկում տպել է Միրզա Մահմուդ խանի պատկերը, տակը ստորագրված Միրզա Բիղա խան, և այդ վերջինի կենսագրութիւնը: Եթէ Օդէսայի լրագիրը այդպէս է տպում միշտ իր պատկերները, այն ժամանակ չնորհաւորում ենք նրա ընթերցողներին:

—

Մենք ստացանք Քութայիսից, ձրի իգական դպրոցի կառավարչուհուց հետեւեալը, տպելու համար. «Մայիսի 21-ին, Քութայիսում, Հոգեգալստեան օրը, յօգուտ այստեղի ձրի իգական դպրոցի, կայանալու է ժողովրդական զբօսանք, և երեխաների համար վաճառանոց, առանց փուճ տոմսակների: Նուէրները կընդունվեն մեծ շնորհակալութեամբ թէ իրերով և թէ դրամով: Ցանկացողները իրանց նուէրները պէտք է ուղարկեն ուսումնարանի կառավարչուհի՝ Տիմչենկո Բուբանին:»

—

Մենք ստացանք Թիֆլիսում նոր լոյս տեսած մի փոքրիկ ժողովրդական գրքոյկ, այն է Լեֆօրի «Դրօշակ» անունով գեղեցիկ զրոյցը, որ թարգմանել է Գէորգ ք. Մկրտումեանը:

—

ԹԵԼԱՒԻՑ մեզ գրում են. «Հարկաւոր ենք համարում հաղորդել հետեւեալ, թէև մի փոքր ուշացած լուրը: «Այս օրերս այստեղ մի սարսափելի եղեռնագործութիւն պատահեց: Մի քանի չարագործներ գիշերը մտնելով 75 տարեկան հարուստ Եազոր Տէր-Սարգսեանի տունը, որը իր որդուց առանձին էր ապրում, սպանել են՝ 25 տեղից վիրաւորելով այդ առոյգ ծերունուն, որին խաբելով միայն կարողացել էին ներս մտնել չարագործները: Տարել են ոսկէ ժամացոյցը և բաւականին փող: Առաւօտեան միայն յայտնվեց այդ տխուր լուրը. չարագործներից մի քանիսին արդէն ձերբակալել են: Հանգուցեալը թողել է ահագին ժառանգութիւն իր միակ և անզաւակ որդուն՝ Բուղդան Տէր-Սարգսեանցին, որը, յուսով ենք, իր հոր յիշատակը յարգելու համար ուսումնարանին և եկեղեցուն մի աչքի ընկնող գումար կը նուիրէ, և կամ իր ձեռքով հէնց նորից կը չինէ հայոց խարխուլ ուսումնարանը, որով կատարած կը լինի մի բարի և մի և նոյն ժամանակ իր հանգուցեալ հօր սրտին շատ մօտիկ մի գործ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԶԱՏԱՄԻՏ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԼՈՒԽՐ

Այս օրերս Հօվարդէն գնաց մի պատգամաւորութիւն մի քանի ազատամիտ կլուբների դաշնակցութեան կողմից և մատուցեց ազատամիտ կուսակցութեան վետերան Գլադստոնին 300 հատորներից բաղկացած մի ժողովածու, դրված կաղնու փայտից շինված մի գեղեցիկ արկղի մէջ:

Գլադստոն չնորհակալութիւն յայտնեց պատգամաւորներին, և յայտարարելով, թէ հրաժարվելով հասարակական գործունէութիւնից, ինքն չէ կորցրել հետաքրքրութիւն դէպի հասարակական գործը, ասաց հետեւեալը.

«Պ.պ. ես խորին հաւատ եմ տածում դէպի իմ երկրի ապագան: Ես յոյս ունեմ, որ այն մեծ յատկութիւնները, որոնք տուել են նրան այդքան աչքի ընկնող և զօրեղ տեղ աշխարհում, սրանից յետոյ էլ կարտայայտվեն մեր ժողովրդի կեանքի մէջ: Այժմ առաջին անգամ, կարելի է ասել, ժողովուրդը իր ամբողջութեամբ հանդէս եկաւ քաղաքական գործունէութեան ասպարէզը: Բարձր դասակարգերը դեռ նորերս իրանց ձեռքում ունէին իշխանութիւնը: Մինչև վերջին տասը տարին նրանք բաւական մեծ ծաւալով օգտվում էին այդ իշխանութիւնից. ես, ի հարկէ, խօսում եմ քաղաքականապէս օգտվելու մասին: Նրանց ձեռքումն էր, եթէ ոչ իշխանութեան մենաւաճառութիւնը, բայց գոնէ մի քիչ նման մենաւաճառութեան, և ես կարծում եմ, որ նախկին կարգերի ամենաջերմ երկրպագուները չեն կարող պնդել, թէ այն ժամանակները երկիրը կառավարող դասակարգերը միշտ գործ էին դնում իրանց ազդեցութիւնը դէպի բարին:»

Սխալները և զեղծումները, որոնց հետ շաղկապված էր նախկին սիստեմը, բղխում էին, Գլադստոնի կարծիքով, առհասարակ մարդկային բնութեանը յատուկ թուլութիւններից, այն հրապոյրներից, որոնց հետ կապված է իր ձեռքում իշխանութիւն պահելու ցանկութիւնը: Այժմ ազգաբնակութեան այն չրջանը, որին թոյլ է տրված անմիջական ազդեցութիւն ունենալ պետական գործերի վրա, նշանաւոր կերպով ընդարձակվեց: Ներկայումս,—ասաց հռետորը,—իսկապէս ասած, փորձ է լինում տեսնելու, թէ որքան պէտքական են այդ նոր տարրերը պետական վարչութեան մասնակցութեան մէջ: «Ես մեծ յոյս ունեմ,—շարունակեց Գլադստոն,—որ նրանք պատւով կը դուրս գան այդ փորձից. և ինձ միշտ մեծ զոհունակութիւն են պատճառում այն փաստերը, որոնք վկայում են, որ մի քանի դէպքերում բանւորները արդէն մեծ ընդունակութիւն ցոյց տուին իշխանութիւնից օգտվելու ժամանակ: Այդ ընդունակութիւնը արտայայտվեց նրանում, որ նրանք կարողացան իրանց համար ներկայացուցիչներ ընտրել: Պարլամենտի անդամների այն խումբը, որ յայտնի է բանւոր պատգամաւորների անուան տակ, շատ լաւ է պահում իրան, և նրանց ընտրութիւնը պատիւ է բերում նրանց, որոնց նրանք ներկայացնում են և որոնք ընտրել են նրանց համայնքների ժողովի համար: (Ծափահարութիւններ):

Այդ առիթով «Daily News» նկատում է, որ Անգլիայում ժողովրդական ներկայացուցչութիւնը դէմոկրատիական սկզբունքներով զարդացնելու համար, հարկաւոր է էլի մի չարք բէֆորմներ մտցնել:

ԺՈՂՈՎ ԿԻՊՐՈՍ ԿՂԶՈՒ ՎՐԱ

«Ռէյտերի գործակալութիւնը» հաղորդում է, որ Լարնակում (Կիպրոս կղզու վրա) այս օրերս մի մեծ ժողով կայացաւ, որին ներկայ էր ահագին բազմութիւն: Այդ ժողովում քննվում էր կղզու դրութիւնը և վճռվեց դիմել անգլիական կառավարութեանը մի յայտագրով, որի մէջ բացատրելով իրանց ցանկութիւնները, խնդրում են նպաստել իրանց, որ Կիպրոս կղզին անցնի Յունաստանի ձեռքը:

Այդ հանգամանքը մեծ յուզմունք է առաջացնում ազգաբնակութեան մէջ և վախենում են, որ ընդհարումներ կարող են տեղի ունենալ թիւրքերի և յոյների մէջ:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Խնուս, մարտի 21-ին

Այս օրերս Խասէ, Խանդուր և Խղլամար քիւրդ գիւղերի բնակիչները գնալով Բերդ՝ թիւրք պաշտօնեային բողոք են տալիս, որ Քաղքիկ գիւղի հայ բնակիչները վճռել են յարձակվել քիւրդ գիւղերի վրա և բնակիչներին բնաջինջ անել:

Թիւրք ատիճանաւորը, իր կառավարութեան գիտութեամբ, իսկոյն զէնք է բաժանում թէ քրդերին և թէ թիւրքերին, իբրև թէ «հայկական» յարձակումից պաշտպանվելու համար:—Սակայն մի քանի օր միայն անցած, մի քիւրդ ցեղապետ յայտնեց հայերին, որ ինքը թիւրք ատիճանաւորն էր սովորեցրել այդ հայերի վերաբերմամբ այդպիսի բողոք տալ, որպէս զի առիթ ունենան մահմետականներին նոր զէնք բաժանել:

Մարտի 2-ի գիշերը քիւրդերը զինաւորված յարձակվեցին Քաղքիկ հայաբնակ գիւղի վրա և սարսափ զցեցին բնակիչների մէջ: Այդ յարձակման նպատակն է եղել կրակ տալ գիւղը: Սակայն այդ չյաջողվեց. քրդերին աջողվեց միայն մի քանի գոմեր և դարմանանոցներ կրակ տալ:

Պէտք է նկատել, որ առհասարակ յարդանոցներ կրակ տալը Խնուսի գաւառում քիւրդերի սովորական զբաղմունքն է դարձել:

Մի քանի օր առաջ, մարտի 11-ին, Քաղքիկ գիւղը իջնանեց ոստիկանութեան պաշտօնեայ Ըրզախ էֆէնդին, որ եկել էր հարկեր հաւաքելու: Գիւղացիների վրա երկիւղ դցելու համար, այդ Ըրզախ էֆէնդին կանչեց իր մօտ գիւղի մի քանի «համբա»-ներին և առանց պատճառի ծեծել տուեց, և ապա հրամայեց, որ ոչխարի տուրքը բերին:—Գիւղացիները պատասխանեցին, թէ ինչպէս ոչխարի տուրք տան, քանի որ ոչխարը դեռ չէ համարած և նրանց թիւը յայտնի չէ: Ոստիկանութեան պաշտօնեան հրամայեց անցեալ տարվայ հաշուով վճարել: Գիւղացիք սկսեցին աղաչել, որ այդ հաշուով չը պահանջի, քանի որ անցեալ տարվայ ոչխարների կէսն անգամ չունեն այս տարի, կոտորվել են: Այդ գիտէր ինքը Ըրզախ էֆէնդին, և հէնց այդ պատճառով էլ անցեալի հաշուով էր պահանջում: Տեսնելով որ իր ապօրինի հրամանը չեն կատարում, գիւղի մեծերին «տուսաղ» զցեց, և մի քանի ժամից յետոյ միայն արձակեց, երբ 4 ոսկու կաշառք առաւ:

Խնուսում յայտնի աւազակապետ Ջնտի-աղան, որ մի քանի տարուց ի վեր թալանում, աւերում է ամբողջ Խնուսը, աղատ համարձակ ման է գալիս. հերիք չէ, որ այդ աւազակը աղատ է ման գալիս, նա մինչև անգամ կառավարչական պաշտօնեաների հետ մտնում է գիւղերը, և իբրև իշխանաւոր՝ ժողովրդին սպառնալիքներ կարդում: Այդպէս, օրինակ, մարտի 12-ին, գալով Խալիլ-Զաւուշ գիւղը, երեկոյեան ժամի ժամանակ, երբ գիւղացիները դուրս էին գալիս եկեղեցուց, նա սկսեց սպառնալիքներ կարդալ և հայհոյել «գեավուրներին»: Այդ աւազակի կարծիքով, բոլոր հայերը «չորացած ծառ» են, և իբրև չորացած ծառ՝ պէտք է նրանց կտրել, այրել և ոչնչացնել:—Լուր կայ, որ կառավարութիւնը այդ աւազակին է յանձնել խլել հայերից զէնքը և գտնել ապստամբ հայերին, որոնք իբր թէ ժողովրդին զրդռում են,—և ահա այդ հրամանից լրբացած՝ այդ աւազակը անարգել մտնում է հայ գիւղերը, ձերբակալում անմեղ երիտասարդ գիւղացիներին, խուզարկում բոլորի տները, և տանջում խաղաղ գիւղացիներին:

Երէկ ոստիկանները գնացին Խալիլ-Զաւուշ գիւղը, և երեք գիւղացի տարան Բերդը, և բանտարկեցին: Ինչ է պատճառը, ոչ ոք գիտէ: Խնուսը տագնապի մէջ է:

Պանդուխտ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, ապրիլի 5-ին

Հայոց պատրիարքի փոխանորդ Գաբրիել վարդապետ Ճէվահիրճեան, երկուշաբթի օր Ֆէնէրի յունաց պատրիարքարանը երթալով, պատրիարք հօր կողմէն չնորհաւորեց Զատկական տօն Անթիմոս սրբազանին:

Տիեզերական պատրիարքը շատ սիրալիր ընդունելութիւն մը ըրաւ, չրջապատուած յոյն եկեղեցական և աշխարհական նշանաւոր անձնաւորութիւններէ: Փոխանորդ հայրը արտասանեց դրաւոր ուղերձ մը, որուն մէջ բացատրելէ ետք յիսուսաւանդ սիրոյ համեմատ երկու քոյր եկեղեցիներուն իրարու հետ ունեցած բարւոք վերաբերութիւնը, իբր թարգման հայ ազգին հոգեբխիկ մաղթանքներուն, աղօթեց որ մինչև վերջը յարատեւէ այդ վիճակը:

Տիմիդրիոս էֆէնտի Զօլաքիտէ յունարէնի թարգմանեց արտասանուած ուղերձը: Անթիմոս պատրիարք պատասխանեց համակրելի խօսքերով և ըսաւ որ իր ջանքը եղած է և պիտի ըլլայ յարաբերութեանց ամենէն լաւագոյնը պահել հայ եկեղեցիին հետ, որ ամենէն աւելի սիրոյ և եղբայրութեան սկզբունքին աւանդապահը եղած է միշտ: Փոխանորդ հայրը հրաժեշտ առնելով իջաւ Ֆէնէրի Մայր եկեղեցին, ուր, եկեղեցական ու աշխարհական անձերէ չրջապատուած, աղօթք ըրաւ ու օրհնեց երկու ազգերը:

Պատրիարքական փոխանորդ հայրը և Աբրահամ էֆէնտի Ֆրէնկեան երկուշաբթի օր Պուլկարաց Էկզարքարանը երթալով, պատրիարք հօր կողմէն չնորհաւորեցին Զատկական տօնը Եսիֆ սրբազանին:

Կիրակի օր Անգլիոյ դեսպանատան Բ. Թարգման Մարինիչ, Ռուսիոյ դեսպանատան Բ. Թարգման Զէրպաչօվ, Իտալիոյ դեսպանատան Բ. Թարգման Գանճիա և պարսկական դեսպանատան առաջին քարտուղար Ցովհաննէս խան պատրիարքարան գալով, իրանց դեսպաններուն կողմէն չնորհաւորեցին Զատկական տօնը պատրիարք հօր:

Ֆրանսիական դեսպանատան առաջին թարգման Ռուէ և Աւստրիոյ դեսպանատան քարտուղար Ռոտոլֆ Բոկաչէր երէկ պատրիարքարան գալով, իրենց դեսպաններուն կողմէն չնորհաւորեցին Զատկական տօնը:

Պուլկարիոյ գործակատար Տիմիթրօֆ երկուշաբթի պատրիարքարան գալով, չնորհաւորեց Զատկական տօնը պատրիարք հօր:

Պ—ի

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԳՐՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

—

Երէկ, «Մշակի» մէջ, № 44, կարդացի մի հետաքրքրական յայտարարութիւն: Դա Թիֆլիսի Հաւլաբար թաղի Շամքորեցոց եկեղեցու երէցփոխի հաշիւն էր:

Հաշուի մէջ գրած է հետեւեալը. «Վաճառված է աղաւնու աղբ՝ 93 ռուբլի 40 կոպէկ»:

Կարդացի և մտածում եմ.

«Ա՛յ գիղի աշխարհ, ինչ օրեր ենք տեսնում. հայոց եկեղեցին տարեկան մուտք ունի 93 ռուբլի 40 կոպէկ, և ինչից.—աղաւնու ծերտից: Տեսնված բան է՞ սա»:

Մի ժամանակ մեր երէցփոխները եկեղեցու նաղդ փողն էլ աղբ էին դարձնում, իսկ այժմ դուրս են եկել երէցփոխներ, որ աղբից էլ փող են շինում:

Հրաշք չէ, բաս ինչ է:

Եւ այդ չը տեսնված հրաշքը կատարվում է չնորհիւ այն բանի, որ հաշուեւութեան սկզբունքը հրապարակ եկաւ, ամեն բան թագցնողները սկսեցին տեղ տալ օրինաւոր մարդկանց, կնտրոլ ճանաչող երեցփոխներին:

Ես չեմ ճանաչում Շամքորեցոց եկեղեցու երէցփոխին, որի անունն է Աբրամ Ղոնդախսազեան, բայց համոզված եմ, որ նա անպատճառ «մշակական» պիտի լինի, որ փոխանակ թագցնելու, փոխանակ եկամուտները «աղբ» դարձնելու, հաշիւ է տալիս, ամեն բան հրապարակ է բերում...

Եւ ես համոզված եմ, որ հայոց եկեղեցու «գող» երէցփոխների պատմութեան մէջ երէցփոխ Ղոնդախսազեան կը մնայ անմոռանալի, իբրև «աղբից փող չինող» երէցփոխ:

Չէ՞ որ դա էլ մի տեսակ չնորհք է:

—

Երկու օր է, որ ես գտնվում եմ «Մշակի» Կ. Պոլսի թղթակցութեան ծանր ազդեցութեան տակ:—Ի՞նչ կը լինի, ճշմարիտ, եթէ այդ անիծեալ Աչըգեան ընտրվի Կիլիկիայի հայոց կաթողիկոս:

Եւ ով գիտէ, գուցէ ընտրվի: Մեր «հոսոս» եղբայրները վերին ատիճանի վախկոտ են, կառավարութիւնն էլ, անկասկած, Աչըգեանի կողմն է, ուզում է նրա ձեռքով Կիլիկիայում բազմացնել Սիմոն-Մագուտներ, Նուրեաններ և դրանց նման «բարի պուղներ»,—և ով գիտէ, մինչև իսկ Կ. Պոլսի պատրիարքարանի մի հակաթոռ ստեղծել...

Եւ, ով սարսափ, յանկարծ հեռագիրը լուր բերի, թէ Աչըգեան ընտրվեց, այն էլ մի այնպիսի ժամանակ, երբ թիւրքահայերը աւելի քան երբ և իցէ պէտք է ցոյց տան բարոյական առաքինութիւններ, կամքի ոյժ և իդէալական մաքրութիւն:

Ճշմարիտ է, Աչըգեանի ընտրութիւնը կարող է ուրախացնել մեր խաւարամիտներին, որոնք նրա մէջ միշտ տեսնում էին երեւելի հայրենասէր և մաքուր եկեղեցական,—բայց չէ՞ որ դա մի անմարսելի անպատուութիւն կը լինի ամբողջ ազգի համար...

—

Այդ տեսակ տխուր մտածմունքներով նստած,

մտածում էի ինչ անեմ, ինչ չանեմ, և ահա սկսեցի թերթել «Հայոց պարբերական մամուլի պատմութիւնը», որ դրած էր սեղանի վրա։ Եւ շատ լաւ եղաւ. իսկոյն մոռացայ Աշըզեանին և սկսեցի անընդհատ ծիծաղել...

Մի ժամանակ Թիֆլիսում լոյս էր տեսնում «Անեկդոտներ» հայերէն լեզուով, իբրև թերթ ընթերցանութեան նիւթ, իբրև ծիծաղեցնող գիրք։ Այժմ այլ ևս ոչ ոք անեկդոտներ չէ տպագրում։ Եւ ինչի համար պէտք է տպագրվեն, քանի որ տարին մի քանի անգամ լոյս են տեսնում այնպիսի գրքեր, որոնց վերնագիրը թէև «Բանաստեղծութիւն», «Պատմութիւն» կամ մի այդպիսի բան է, բայց իսկապէս անեկդոտների տեղ միայն կարող են ծառայել։

Մեր խմբագրատան մէջ մի քանի ամիս, կամ մի ամբողջ տարի շարունակ մի որ և է գիրք կատարում է այդ «անեկդոտների» դերը։

Մի ժամանակ այդ դերը կատարում էր ոմն Սաֆի-Սատիրի «Բանաստեղծութիւնները»։ Ով տխուր էր լինում խմբագրատանը, վերցնում էր այդ Սաֆի-Սատիրի երեսի ոտանաւորները և կարդում,—իսկոյն սկսում էր հոմերական ծիծաղ։

Սաֆի-Սատիրի բանաստեղծութիւնները մոռացվեցին, երբ անցեալ տարի ստացվեց Բագուից մի թուրքերէն գիրք այսպիսի վերնագրով. «Թիւլքի վէ չախ-չախ-բէյ» (հէնց վերնագիրը ինչ ասէք արժէ)։

Դա ոտանաւորներով պատկերազարդ մի պատմութիւն է, որ գրել է մի լուսաւորված մահմէտական, ոմն Սուլթան-Մէջիդ Գանիև։ Եւ որ անեկդոտը ընդունակ է այնքան ծիծաղեցնել, որքան ծիծաղեցնում է Սուլթան-Մէջիդի երեսի «չարաղութիւնը», երբ մեր պարսկագէտ աշխատակիցներից մէկը սկսում է արևելեան հանգով կարդալ այդ յիմարութեան մարգարիտները...

Սակայն աշխարհումս մշտական ոչինչ չը կայ։ Ահա ստացվեց Ալէքսանդրօպոլից «Հայոց պարբերական մամուլի պատմութիւնը»,—որի գրողը հաւանօրէն աղգակից պիտի լինի Ռուբինեան թագաւորական տան, որովհետև անունը Գարեգին է, իսկ աղգանունը՝ Լեոնեան,—և իսկոյն մոռացվեցին թէ Սաֆի-Սատիրի ոտանաւորները, թէ Սուլթան-Մէջիդի «Թիւլքի վէ չախ-չախ-բէյը»։ Այս նորը գերազանցում է առաջիններին նախ՝ իր մեծութեամբ, ուրեմն անսպառելի է, երկրորդ՝ իր մեծամտութեամբ, ուրեմն կոմիկական է, և երրորդ՝ իր անվերջ կուրիոզներով, որ շատ դուրեկան է։

Ահա այժմ այդ գիրքն է, որ կարդում եմ, ծիծաղում և մոռանում աշխարհիս դարդերը։

Եւ եթէ չը լինէին այդ Սաֆի-Սատիրները, իրանց «ոտանաւորներով», Սուլթան-Մէջիդները իրանց «Թիւլքի վէ չախ-չախ-բէյներով» և Գարեգին Լեոնեանները իրանց «Պատմական խայտառակութիւններով»,—ինչ պէտք է անէր հայոց գրողը՝ տխուր բոպէներին։

ԳՐՈՂ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 ապրիլի։ Ռուսաց երաժշտական ընկերութեանը Բարձրագոյն թոյլատրված է ստորագրութիւն բանալ ի յիշատակ (արձանի) Ա. Ռուբինշտէյնի։

ՄՕՍԿՎԱ, 19 ապրիլի։ Մոսկվայի նահանգական աղնուականութեան արտակարգ ժողովը 15 հազար ր. որոշեց Մոսկվայում, կայսր Ալէքսանդր III-ի արձանի համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 ապրիլի։ Այսօր Պետերբուրգի թեմի բոլոր եկեղեցիներում հոգեհանգիստներ են կատարվում կայսր Ալէքսանդր Ալէքսանդրովիչի համար։ Պետերբուրգում հոգեհացներ են նշանակված աղքատների համար։ Բոլոր թատրոնները փակված են։

ԼՕՆԴՕՆ, 19 ապրիլի։ «Times» լրագիրը հաղորդում է Կօբէից. «Արտասահմանեան պատերազմական նաւերը կենտրոնանում են եապօնական նաւահանգիստներում։ Ֆրանսիական նաւերին հրամանագրված է պատրաստվել ամեն տեսակ պատահարներին։

«Ռէյտէրի գործակալութեանը» Տիանցզինից հեռագրում են, որ կայսրի հրամանով Լի-Խունգ-Զանգ ուղևորվեց Պետերբուրգ։

ԲԵԼԳՐԱԴ, 19 ապրիլի։ Գահական ճառին պատասխան ուղերձի մէջ հաւանութիւն է տրվում 1888 թվի սահմանադրութեան գործողութիւնը դադարեցնելուն, պախարակվում են այն օրէնքները, որոնք ուղղված են Միլանի և Նատալիա թագուհու դէմ, ցաւակցութիւն է յայտնվում կայսր Ալէքսանդր III-ի մահվան առիթով, խօսվում է մի և նոյն ժամանակ Ռուսաստանի բարեհաճութեան մասին դէպի Սերբիան։

ԱԹԷՆՔ, 19 ապրիլի։ Պարտութիւն կրելով ընտրութիւններին, Տրիկուպէս հրաժարվում է քաղաքական գործունէութիւնից։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

—

ԵՐԵՒԱՆ. Երդ. Հաւատարմատար. Շատ ցաւում ենք, որ երբ ձեր նամակը ստացանք, արդէն տպված էր։

ԱՍՏՐԱԽԱՆ. Ց. Աւագեան. Ձեր ուղարկած փողից 6 ռուբլի յանձնեցինք լուսանկար Տէր-Ղևոնդեանին, որպէս զի ձեզ ուղարկի «Մշակի» աշխատակիցների յօբելեանական ալբոմը։ Մացած 9 ռուբլին յատկացրինք Արծրունու արձանին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։

Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

ԿԻՆ-բժիշկ Ա. Ի. ՍՕՐՕԿԻՆԱ-ՇՁԵՐԲԻՆԻՆԱ—10—11 ժ. կանանց և ներքին հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մորթի հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազոտութիւններ է անում մէզի, խիպ, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ։ (№ 72)

Լոյս տեսաւ
Ա. ՔԱԼԱՆԹԱՐԻ
ՍԱՍՈՒՆ
գրքոյկը աշխարհագրական քարտէզով։
Գինն է 20 կոպէկ։
Վաճառվում է «Մշակի» խմբագրատանը և կենտրոնական գրավաճառանոցում։
(№ 39) 3—10

Լոյս տեսաւ
ԱՆՓՈՐՁ ԳԷՈՒ
«ՎԱՐԴ ԵՎ ՍՈԽԱԿ»
(ոտանաւորներ)
Գինն է 30 կ.։
Դիմել կենտրօնական գրավաճառանոց։
(№ 43) 2—6

Լոյս տեսաւ
ՐԱՖՖԻ
«ՈՎ ԷՐ ՄԵՂԱՒՈՐ»
Գինն է 20 կոպէկ։
Գումարով գնողներին 20% զիջում։
Վաճառվում է «Կովկասեան» գրավաճառանոցում—Կ. Զաքարեա Գրիգորեանի, և հեղինակի այրիի մօտ։

—

Նոյն տեղ և նոյն պայմանով վաճառվում է։

ՐԱՖՖԻ
«ՊԱՐՈՅՐ ՀԱՅԿԱԶՆ»
Գինն է 20 կոպէկ։
Ճանապարհածախսը գնողի վրա է։
(№ 39) 5—5

Կենտրօնական գրավաճարանոցում վաճառվում են
ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ
1. ԱՑՑ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ . 60 կ.
2. ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ. 20 կ.
10—10

Ապրիլի 19-ին Բաթումում վախճանվեց
ԲԺԻՇԿ ԱՐՏԷՄ ՄԻՐՕՆՕՎԻՉ ՄԻՐԻՄԱՆԵԱՆՑ
Անաստասիա Իսահակօվնա ՄԻՐԻՄԱՆՕՎԱ և Իշխանուհի Սալօմէ Տարիէլօվնա ԱԲԱՄԷԼԻՔ յայտնում են իրանց աղգականներին և ծանօթներին՝ առաջինը իր ամուսնու և երկրորդը իր փեսայի մահվան մասին։
Թաղման օրվայ մասին կը յայտարարվի առանձին։ 1—1

Երեքշաբթի, ապրիլի 25-ին,
ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ
ժողովարանի անդամների և կանդիդատների համար լինելու է կոնցերտ կոյր պիանիստ
Ն. Թ. ՏԻԳՐԱՆԵԱՆՑԻ
Եւ ջութակահար Մ. Տ. ՎԱՍԻԼԻԵՎԻ
Կոնցերտի պրոգրամը կազմված կը լինի զլխաւորապէս արևելեան եղանակներից
(№ 44) 1—2

«ԱՂԲԻՒՐ» ԵՒ «ՏԱՐԱԶ»
Ապրիլից Տարազում սկսվել են տպագրվել Տաճկահայաստանի վերաբերեալ պատկերներ։ Զատկվայ համարում տպված է Իզմիրլեան պատրիարքի պատկերը առանց վեղարի։ Ի միջի այլոց տպագրվելու են՝ Ալէքսիանեան և Յովհաննիսեան եպիսկոպոսների, Վահան ծ. վ. Յակոբեանի (պատրիարքի աջակիցներ), բժշկապետ Տիգրան Փէչտմալճեան փաշա (որին թիւրքերը թունաւորեցին Սասունի կոտորածի առիթով), Արթին փաշա Դադեան (արտ. գործ. նախարարի խորհրդական), Նուբար փաշա (Եգիպտոսի մեծ վիզիր և Տաճկա-Հայաստանին Լիբանանի նման ինքնավարութիւն առաջարկող), Աբրահամ փաշա, Պորտուգալ Միքայէլ փաշա (սուլթանի անձն. գանձ. նախարար), Սիւրէա փաշա (թիւրք, որին իրանք թիւրքերը նոյնպէս թունաւորեցին, պատճառաբանելով թէ սա է Սասունի կոտորածի առիթը, մինչդեռ Սիւրէա փաշան ընդդէմ է եղել այդ խորհրդին)։ Գլադստոն, Բոզբէրի, Կիմբերլէյ, Ստեֆենսոն, պրոֆ. Թումայեան, քննիչ յանձնաժողով Հայաստանում։ Հայկական պատգամաւորութիւններ, խմբագիրներ, թղթակիցներ Եւրոպայում։ Հայ հերոսներ և նահատակներ։ Անգլիական պարլամենտում հայասէր պատգամաւորներ։ Շաքիր փաշա (որ լսվում է թէ նշանակվելու է Հայաստանում նահանգապետ), Գօլց փաշա (սրա օդնական). Տաճկա-Հայաստանի տեսարաններից, ուր կատարվում են բարբարոսութիւններ։ Իլդիզ-Կիոսկ, պատրիարքարան հայոց, Ներսէս պատրիարքի շիրիմը։ Սասունի կոտորածը։ Սասունից հրաշքով ազատվածներ և Կովկասում ու Եւրոպայում ապաստարան գտնողներ։

Զէյթուն, Կիլիկիա—տեսարաններ և տիպեր։ Տաճկա-Հայաստանի վիլայէթների քարտէզներ։ Կ. Պոլսում հայ նշանաւոր մատենագիրներ, գործիչներն և այլն։

Սուլթան Համիդ, Աշըզեան, Զաքի փաշա (Սասունի կոտորած անող), մեծ եպարքոս Ճէլաթ փաշա, Գէօրգի փաշա, Իզմէթ-բէյ, Իզէտ փաշա, Զինք փաշա (տաճկ. նախարար։)

Շարունակվում է «Աղբիւր—Տարազի» բաժանորդագրութիւնը։ Ապրիլից—«Տարազ» 5 ր., «Աղբիւր» 2 ր.։ Տարվայ սկզբից «Աղբիւր» և «Տարազ» բոլոր №№ իրանց պրէմիաներով և ընծաներով 9 ր.—60 կ.։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Агбюръ» կամ «Таразъ»

Խմբագիր-հրատարակիչ Տիգրան Նաղարեանց

Շուտով լոյս կը տեսնի
«ՍՈԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ»
անունով աղգային լիակատար երգարանի առաջին հատորը, չորրորդ տպագրութեամբ։ Այս հատորի մէջ, բացի բոլոր գործածական և ժողովրդին յայտնի երգերից, տպագրվում են նոյնպէս և նոր երգեր, և բանաստեղծութիւններ, և երգերին վերաբերեալ արձակ գրուածքներ, թւով 300-ից աւելի։

Զը նայելով գրքի մեծութեանը, իւրաքանչիւր օրինակի գինը նշանակում ենք, կանխիկ վճարող բաժանորդների համար, մի ռուբլի։

Օտարաքաղաքացի ցանկացողները թող բարեհաճեն դիմել Բագու, «Սոխակի» հրատարակչին՝ այս հասցէով. священнику Григорію Григорянцъ, въ БАКУ.

Հրատարակիչ՝ Գրիգոր քահանայ Գրիգորեանց

(№ 44) 1—3

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ընկերութեան վարչութիւնը յայտնում է, որ ընկերութեան կանոնագրութեան § 31 համաձայն, ապրիլի 30-ին, կիրակի, երեկոյեան ժամի 7½-ին, Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում նշանակված է ընդհանուր ժողով, որի պարապմունքի առարկաներն են՝ ա. տեղեկագրի, հաշուի և նախահաշուի ընթերցումը և հաստատումը. բ. պաշտօնական անձերի ընտրութիւնը. վարչութեան նախագահի, փոխ-նախագահի, մի անդամի, գրապահի և խմբագրական մասնաժողովի երեք անդամների։

Վարչութիւնը ընդ սմին հարկ է համարում յայտարարել, որ վարչական վերջին նիստը նշանակված է ապրիլի 29-ին, շաբաթ օր, երեկոյեան, և մինչև այդ նիստը միայն կը լինի այն նոր անդամների ընդունելութիւնը, որոնք կը ցանկանան մասնակցել ընդհանուր ժողովին։

Ընկերութեան 1894 թ. տեղեկագիր ստանալ ցանկացողները թող բարեհաճեն դիմել ընկերութեան գրասենեակը—Բարեատինսկայա փողոց, տուն Գեղեվանովայի, սկսած ամսիս 24-ից։ (№ 45) 1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով յայտնում է ընդհանուրի գիտութեան, որ Թիֆլիսի պ. Նահանգապետը, ապրիլի 13-ին 1895 թվի, հաստատեց երկաթուղու կայարանից ֆայէտոնով քաղաք գալու տակսան՝ 60 կոպէկ «կանէցի» համար, 75 կոպէկի տեղ։ (№ 43) 2—3

ԿԱԿԱՕ ԲԼՕՕԿԷՐ
ՍՆՆԴԱՐԱՐ ԽՄԻԶՔ (գլխաւոր պահեստը Ռուսաստանի համար «ԵԱՎԱ» ֆիրմայի մէջ. (С.-Петербургъ, Большая Морская, 38).
Ծախվում է կօլօնիալ և դեղային ապրանքների բոլոր լաւ մագազիններում 1/1, 1/2, 1/4 և 1/8 կիլոգրամանոց թիթեղեայ տուփերի մէջ։
(GRAND PRIX) Բարձրագոյն պարգև Անտվերպէնի համաշխարհային ցուցահանդիսում 1894 թվին։ (№ 151) 25—50

Дозволено цензурою, Тифлисъ, 21 Апрѣля 1895 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.